# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 22-Ա

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով ավագանին կայացրեց որոշում.

22-Ա

Հաստատել համայնքի ավագանու թիվ 04 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հերթականությամբ:

1. ՆԱՄԱԿ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ
   զեկ.Ս.Գրիգորյան/
2. ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ և ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄ
   /զեկ.Ս.Գրիգորյան/

Կողմ -9 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԶԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
5. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
7. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 23-Ա

### «ԱՐԱՐԱՏ ՑԵՄԵՆՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ 4% (ՉՈՐՍ ՏՈԿՈՍ) ՆՎԱԶԵՑՎԱԾ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.08.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 29-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ ԱՌԱՋ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՎՐԱ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի ներկայացրած նամակը «Արարատցեմենտ» ՓԲ ընկերության վերաբերյալ՝ ավագանին կայացրեց որոշում.**

23-Ա

1. Հաշվի առնելով, որ 4% (չորս տոկոս) վարձավճարի վճարման մասով, ինչպես ընկերությունը իր գրությամբ խոստանում է, որ 10 բանկային օրյա ժամկետում ամբողջությամբ կվճարի. ավագանին առաջարկեց .

   «Արարատցեմենտ» ՓԲ ընկերությանը .

   1) Որոշման քաղվացքը ստանալուց 10 բանկային օրյա ժամկետում 4%-ի(չորս տոկոս) չափով հաշվարկված վարձավճարի և պայմանագրով սահմանված տույժերի գումարը, ինչպես նաև 2019 թվականի համար հաշվարկված վարձավճարի գումարը ամբողջությամբ վճարել Ավշարի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին:

2. Սույն որոշման առաջին կետում նշված 4%-ի(չորս տոկոսի) չափով հաշվարկված վարձավճարի և առաջացած տույժի վճարումը ամբողջությամբ կատարելուց հետո, նոր կարելի է վերանայել 4 % (չորս տոկոս) նվազեցվող վարձավճարի չափը՝ 22.08.2018 թվականին նախորդող ժամանակահատվածի վրա կիրառելու հարցը:
3. Վարձավճարի մասով վճարումները ձգձգելու, կամ պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում ավագանին կառաջնորդվի պայմանագրերի 9.4 կետերի պահանջներով:

Կողմ -9 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՋԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
5. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՋԱՎԵՆ
7. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 24-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԱՍՆԱԿԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ «ԳԱԳՄԱՅ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի պահանջներով ավագանին որոշեց 24-Ա**

1. Գույքի գնահատման որակավորում ունեցող անձի կողմից վերագնահատել անասնակերի արտադրության սարքավորումները և իրականացնել ուղղակի վաճառք:
2. Ուղղակի վաճառքի արժեք սահմանել գույքի գնահատման որակավորում ունեցող անձի կողմից գնահատված գույքի արժեքը:
3. Թույլատրել համայնքի ղեկավարին համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի պահանջների կազմակերպելու և իրականացնելու ուղղակի վաճառք :
4. Վաճառքն իրականացնելուց հետո, այն դուրս գրել համայնքի գույքագրման փաստաթղթերից և հաստատել:

Կողմ -9 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԶԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
5. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
7. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 25-Ա

### ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱՄԱԿԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԱՐԱՐԱՏԻ ՀՓՋ-ԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով համայնքի ավագանու 30.06.2014 թվականի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ավշար համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» N 22-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին թիվ 10-Ա որոշմամբ հաստատված կարգի՝ ընդունված 31.03.2016 թվականին և ընդառաջելով ԱԻՆ փրկարար ծառայության Արարատի փրկարարական վարչության հրշեջ փրկարարական ջոկատի դիմում խնդրանքին, ինչպես նաև կարևորելով այդ ծառայության աշխատանքը.

25-Ա

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի համապատասխան հոդվածից 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ փոխանցել նամակում նշված ԱՁ «Միհրան Շահվերդյան» ՀՎՀՀ 47813033 շինանյութի մանրածախ առևտրի մասնագիտացված խանութի հաշվին՝ գումարի համարժեք շինանյութ ձեռք բերելու և ընդունման հանձնման ակտով հրշեջ փրկարարական ծառայությանը հանձնելու համար:

Կողմ -9 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՔԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
5. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՔԱՎԵՆ
7. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար, Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 26-Ա

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ և ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ավագանին քննարկեց հողի հարկի գծով վճարումների թերացումների վերաբերյալ հարցը և խոստացավ , որ անպայման կտանեն բացատրական աշխատանքներ բնակչության շրջանում , հողի հարկի վճարումները ավելի ակտիվացնելու համար և կայացրեց որոշում.

**26-Ա**

1. Հարցը ընդունել ի գիտություն և բացատրական աշխատանք տանել հողի սեփականատերերի հետ հողի հարկի վճարումների վերբերյալ:

Կողմ -9 Դեմ – 0 Ձեռնպահ-0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԶԱՔՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՇՈՏ
5. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
7. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
8. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՈՎՍԵՓ
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ